ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան «30» նոյեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի՝ 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 1-Լ որոշման հիման վրա 2021 թվականի նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Տեսչական մարմնի Կառավարման խորհրդի նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.

2. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում.

3. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.

4. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի հաստիքացուցակում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն.

5. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման հաստատում.

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Փիլոյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ս. Գրիգորյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան (պարտականությունները ժամանակավոր կատարող՝ Ա. Պետրոսյան)	- ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Մ. Սանդոյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի կառավարման խորհրդի անդամ (համաձայնությամբ)
Ա. Կարապետյան	- «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Գ. Սանոսյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Դանիելյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Մ. Հովհաննիսյան	- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի քաղաքաշինության ամբիոնի պրոֆեսոր, ճարտարապետության թեկնածու (համաձայնությամբ)

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 8 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.

2. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը.

3. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.

4. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի հաստիքացուցակում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն.

5. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փիլոյան**

Կառավարման խորհրդի քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող՝ **Ա. Հայրապետյան**